ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 53/46973հ. «06» 08 2014թ.

«ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրած Ձեր 04.08.2014թ. գրության տեղեկացնում եմ, որ հարկային գաղտնիք կազմող տեղեկությունները հարկային մարմինը պահպանում է ՀՀ օրենքով սահմանված կարգով: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա պարունակում է գաղտնիք: Կատարվող ցանկացած դրամական ծախսի, այդ թվում հարկային պարտավորությունների գաղտնիությունը պաշտպանվում է ՀՀ օրենսդրությամբ:

Ուստի նշված տեղեկատվությունը կարող է տրամադրվել հարցման լիազորությունները հիմնավորող փաստաթղթերի առկայության պարագայում:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ — ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատ. Արթուր Խաչատրյան
Հեռ. 51-42-42